եւ Սինկոտ[1] գեղերը թափւում է Շաւշէտ գետը աջից։ Սինկոտ առուակը Ատեան լեռներից–ոռոգում է երկրորդ Սիկոտը եւ թափւում է նոյնպէս Շաւշէտի վտակը։ Զախկոմից Շաւշէտի ջրին միանում է Օքրոբագետի առուակը, որ իջնում է Եալանուզչամից, ոռոգում է Կուչէնի եւ Օքրոբագետի[2] հանդաստանը. նոյն կողմից Մամանելիս առ–ը ոռոգում է Բաբաթի, Մամա–

---

1 Սինկոտում կայ մի մեծ քրիստոնէական տաճար, որ հեթանոսական հիմունքի վերայ է շինուած։ Այս տաճարը է. դարի գործ է, հրաշալի ճարտարապետութիւն ունի։ Սինկոտ անունով գեղեր շատ կան Շաւշէտ, Արգվին եւ Մուրզուլ։

2 Օքրոբագետը հին գեղ էր մինչեւ 500 տնով. երկու եկեղեցի եւ ճոխ բնակչութիւն ունէր։ Այս գեղը Շաւշէտի գործարանական եւ արհեստագիտական աւանն էր. ունէր ջուլհականոցներ, ներկարարներ, խաղախորդներ, կոշկակարներ, դերձակներ, դարբիններ, պղնձագործներ, պայտառներ, որմնադիրներ եւ հիւսներ։ Սրանց ապահով եւ հասոյթաւոր վիճակը կարել էր Շամախեցի եւ Նուխեցի Ռուսաստանի պաշտոնեաների հանգիստը, որոնք անվերջ իրենց քարոզներով մահմեդականներին գրգռում էին քրիստոնեայ Հայերի դէմ։ Ո՛չ միայն լաւ արհեստաւորներ էին, այլ մեծ էլ գիւղատնտեսութիւն ունէին. սրանց եղը, պանիրը, մեղրը, չոր միրգը, գինին, օղին մեծ սպառում ունէր Բաթում եւ անմիջապէս ծախւում էր։ Նոյն իսկ լաւ ցանարարութիւն ունէին եւ ծխախոտի ընտիր տեսակը թանգ էին գնահատում։ Սաթլէլ, Մամանելիս գեղերն էլ սրանց էին հետեւում, թէեւ այդ ծաւալը չունէին։ Այս բարեկեցիկ վիճակից նախանձորդ թէկերն ու մոլլաները 1915—1918 թ. թ. բոլոր քրիստոնեաներին կոտորեցին եւ գեղերը աւերակ թողին։ Օքրոբագետի Ս. Յովհաննէս տաճարի բակում գերեզմաններ կային ԺԸ–ԺԱ. դարերից մնացած, որոնց արձանագրութիւնները եւ քանդակները աւելի հին են։